



ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Մասնագիտություն Հայոց պատմություն

Թեմա Հայկական հարցի միջազգայնացումը: Բովանդակությունը և հետևանքները

Կատարող Պետրոսյան Գարեգին Խաչիկի
Ազգանուն, անուն, հայրանուն

Ղեկավար Եփրիկյան Արմինե, պ.գ.թ., դոցենտ
Ազգանուն, անուն, գիտական աստիճան, կոչում

Հետազոտական աշխատանքի թեմայի ընտրության հարցում սովորաբար նախապատվությունը տալիս են հիմնահարցերի արձարձման այնպիսի եղանակին, որ հնարավոր լինի մի կողմից ընդգրկուն պատկերացում ձևավորել ուսումնասիրվող նյութի ծավալի վերաբերյալ, մյուս կողմից, հնարավոր լինի մատուցել այն ինտեգրացված խմբային աշխատանքի տեսքով : Որպեսզի երկու այս եղանակների կիրառությունը համադրելի լինի, դասարանը բաժանում են պայմանական խմբերի, արձարձվող թեման՝ ենթաբաժինների: Տվյալ պարագայում ենթաբաժինները յոթն են և համապատասխանաբար դասարանը նույնպես բաժանում են 7 ենթախմբերի՝ յուրաքանչյուրում երեքական կամ չորսական աշակերտ՝ կախված յուրաքանչյուր խմբին տրվող առաջադրանքի ծավալից և ինչ-որ առումով նաև աշակերտների ընդունակությունների աստիճանից: Այսպես բաժանում են առաջադրանքները ըստ ենթախմբերի.

1. Հայկական հարցի վերաբերյալ գոյություն ունեցող բնութագրությունները: Հասարակական-քաղաքական և հոգևոր-մշակութային գործիչների տարբեր ժամանակներում հնչեցված գնահատականները հարցի վերաբերյալ:
2. Ռուս-թուրքական պատերազմը և Սան-Ստեֆանոյի պայմանագիրը
3. Հայկական հարցը որպես տերությունների քաղաքական սակարկության առարկա
4. Անգլո-ռուսական գաղտնի համաձայնագիրը և Անգլո-թուրքական գաղտնի կոնվենտը
5. Հայկական պատվիրակության ջանքերը տերությունների միջազգային վեհաժողովից առաջ
6. Բեռլինի վեհաժողովը և նրա դերը Հայ ժողովրդի Յեղասպանության հարցում
7. Յեղասպանության իրագործման գործիքները: Պանիսլամիզմի և պանթուրքիզմի դերը այդ գործընթացում:

Այս եղանակը հնարավորություն է տալիս մի կողմից յուրաքանչյուրին առավել խորությամբ ուսումնասիրել հատկացված ենթաբաժինը, լրացուցիչ նյութերի օգնությամբ հարստացնել այն, մյուս կողմից ներկայացվող բոլոր ենթաբաժինների հանրագումարը հնարավորություն է տալիս հարցի վերաբերյալ կազմել համակողմանի, քննական և ամբողջական

պատկերացում: Որպես ներկայացման մեթոդական ելակետ խմբերից յուրաքանչյուրին պահանջ է առաջադրվում ենթաբաժինները մատուցելուց հիմք ընդունել Վեննի դիագրաման, այսինքն ոչ միայն ինչ ենք ցանկանում որպեսզի մեր լսարանը սովորի (իմանա), այլև ինչպես ենք կամ ինչ եղանակով ենք ցանկանում դա իրականացնել՝ վիզուալ, խոսքային, ստեղծագործական դերախաղի օգնությամբ կամ գուցե խճանկարի կամ Ջինգո մեթոդի կիրառմամբ:

Առանձին հարցադրումներ ընթացքում կատարվում են՝ կիրառելով «Մտքերի տարափը» կամ մտագրոհի մեթոդը. օրինակ, եթե անգամ տեղյակ չեին, որ կնքվել է անգլո-թուրքական գաղտնի կոնվենտը, ինչու էին Խրիմյանն ու Կ.Պոլսի հայոց պատրիարք Ն.Վարժապետյանը միամտաբար կարծում, որ Անգլիան պետք է հանդես գա հայկական դատի պաշտպանությամբ: Այստեղ հիշեցվում է Վարժապետյանի խոսքը. «Անգլիան որ ուզե՝ Հայաստանը փրկված է: Մեր քաղաքականությունը է Ռուսիո երախտագետ ըլլալով՝ հուսալ Անգղիա և Անգղիո շնորհիվ ապահովել մեր բարոյական և նյութական բարեկեցությունը»:

Մտքերի ազատ հոսքի արդյունքում արտահայտած յուրաքանչյուր տեսակետի վրա ուշադրություն դարձնելով հանդերձ՝ առաջարկվում է հիմնական ուշադրությունը սևեռել Բեռլինի վեհաժողովից հետո հնչեցված եզրահանգումների վրա, որոնք կատարել են Րաֆֆին, Գարեգին Սրվանձտյանը, Գրիգոր Արծրունին և ուրիշներ: Րաֆֆին մասնավորապես եկել էր այն համոզմունքին, որ «Հայերի վիճակը շատ չէր հետաքրքրում անգլիացիներին: Նրանց մի ուրիշ բան էր հարկավոր, նրանց հարկավոր էր գորավոր մի պատնեշ, որ կանգնացնեին ռուսների առաջ»:

Արևմտահայ կյանքին լավատեղյակ, մեկ այլ ջերմ հայրենասեր Գարեգին Սրվանձտյանն էլ նշում էր.«Հայաստանի մեջ է բուն հայկական խնդիրը, իսկ մենք Պեռլինի մեջ կորոնենք զայն»: Ամբողջացնելով միտքը՝ Գրիգոր Արծրունին իր հերթին ազդարարում էր.«Այն ազգը, որ ինքն իր վրա հույս չունի, նա ապագա չունի»:

Այսպես, հերթական խումբը ներկայացնում է հայկական հարցի ծագումը՝ ուշադրություն սևեռելով 19-րդ դարի 70-ական թվականներին Հայկական հարցի բովանդակության մեջ տեղի ունեցած շրջադարձի վրա: Նախ ներկայացվում է, որ առաջին անգամ դարձավ միջազգային դիվանագիտության հարց, և երկրորդ՝ այս շրջափուլում խոսքը գնում էր ոչ թե հայերի անկախության, այլ արևմտահայերի շրջանում բարենորոգումներ անցկացնելու և նրանց համար անվտանգության երաշխիքներ ապահովելու մասին:

Հայկական հարցի սկզբնավորումը առնչվում է 19-րդ դարի երկրորդ կեսին Բալկանյան թերակղզում ծավալված հակաթուրքական բուռն իրադարձությունների հետ: Բալկանյան դեպքերը խանդավառեցին նաև հայ ազատագրական շարժման գործիչներին: Այդ շրջանում է, որ հուզումներ բռնկվեցին Ջեյթունում, Վանում և Օսմանահպատակ հայկական այլ վայրերում: Թուրքական կառավարությունը, որին լայնորեն աջակցում էր Անգլիան, դաժանորեն հաշվեհարդար տեսավ ինչպես Բալկանյան ապստամբած ժողովուրդների, այնպես էլ հայերի հետ:

Եթե 1877–78թթ.պատերազմի սկզբնական շրջանում հայ հասարակական շրջանակները զգուշավորություն էին ցուցաբերում, ռուսական բանակի հաջողություններին զուգահեռ վերաբերմունքը սկսեց փոխվել: Դեռևս պատերազմի ընթացքում հայ հասարակական շրջանները փորձում էին Հայկական դատը ներկայացնել Ռուսաստանի «բարեհայեցողությանը»: Բանակցություններ են սկսվում մեծ իշխան Նիկոլայ Նիկոլևիչի հետ, իսկ զինադարձի կնքումից հետո, երբ նախապատրաստվում էր Սան–Ստեֆանոյի պայմանագրի տեքստը, 1878թ. փետրվարի 1-ին պատրիարք Վարժապետյանը Ալեքսանդր II-ին է ներկայացնում մի ադերսագիր, որտեղ հայցում է Ռուսաստանի միջամտությունը Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ կատարելու համար: Ալեքսանդր II-ը տվեց պաշտոնական համաձայնություն և հանձնարարվեց ռուսական պատվիրակության ղեկավար կոմս Ն. Իգնատևին «թուրքերի հետ կնքվելիք պայմանագրում ընդգրկել հայերի համար այս անչափ կարևոր հարցը»: Սկզբում հայկական կողմն ակնկալում էր ինքնավարության խոստում կորզել տերություններից, բայց ինչպես Ռուսաստանը, այնպես էլ Անգլիան այդպիսի խոստումներ չտվեցին և ինքնավարության հարցը մեջտեղից

դուրս եկավ: Մնում էր միայն բարենորոգումների խոստումը: Ռուսական պատվիրակ Իգնատևը հայերի դժգոհությանն ի պատասխան պարզաբանում էր, որ պատմական այս փուլում միայն դա էր հնարավոր ու խորհուրդ էր տալիս լինել իրատես և բավարարվել ձեռք բերվածով: Սան Ստեֆանոյի դաշնագրի 16-րդ հոդվածն ամբողջությամբ վերաբերում էր թուրքահայության հարցին, որտեղ ասվում էր. «Նկատի առնելով այն, որ ռուսական զորքերի դուրս բերումը նրանց կողմից գրավված Հայաստանի՝ Թուրքիային վերադարձվելիք վայրերից կարող է այնտեղ առիթ տալ բախումների և բարդությունների, որոնք երկու պետությունների բարի հարաբերությունների վրա կունենան վնասակար ազդեցություն, Բարձր Դուռը պարտավորվում է անհապաղ կենսագործել հայաբնակ մարզերի տեղական կարիքներից հարուցվող բարելավումներ և բարենորոգություններ, և զերծ պահել հայերի անվտանգությունը քրդերից և չերքեզներից»:

Թուրքահայերի հարցին էին առնչվում նաև դաշնագրի 25-րդ և 27-րդ հոդվածները: 25-րդ հոդվածը նախատեսում էր ռուսական զորքերը Արևմտյան Հայաստանից դուրս բերել վեց ամսվա ընթացքում: Տրված ժամանակը բավարար էր, որ Բ. Դուռն այստեղ կատարեր «տեղական կարիքներից հարուցվող բարելավումներ և բարենորոգություններ»: Փաստորեն Ռուսաստանը ճանաչվում էր Հայկական հարցի լուծման երաշխավոր: 21-րդ և 27-րդ հոդվածներով թուրքական կողմից պահանջվում էր պատժիչ միջոցներ չձեռնարկել այն անձանց նկատմամբ, որոնք պատերազմի ժամանակ աջակցել էին ռուսական բանակին, և չխոչընդոտել այն հայերին, որոնք ցանկություն կհայտնեին հեռանալ Թուրքիայից:

Այնուհետև հակիրճ քննարկում է կազմակերպվում Սան–Ստեֆանոյի պայմանագրի՝ հայերին առնչվող հոդվածների բովանդակային մասի վերաբերյալ: Ներկայացվում են ինչպես դրական, այնպես էլ անորոշ կողմերը: Ներկայացվում է, որ Սան–Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածով Թուրքիան պաշտոնապես ճանաչեց Օսմանյան կայսրության սահմաններում հայկական տարածքների գոյությունը, տարածքներ, որոնց նկատմամբ օսմանահպատակ հայ ժողովուրդն ունի պատմական իրավունքներ: Առաջին անգամ Հայկական հարցը վերածվեց քաղաքական

գործոնի, տեղ գտավ միջազգային պայմանագրում և դարձավ Արևելյան հարցի բաղկացուցիչ մասը:

Մյուս կողմից հիշեցվում է, որ այս բոլորով հանդերձ 16-րդ հողվածը լի էր անորոշություններով: Նախ չէր նշվում, թե որոնք էին հայկական նահանգների սահմանները, չէր որոշվում, թե ով պետք է ճշտեր տեղական կարիքները և ինչպես, բարենորոգումների բնույթն ու ընդգրկումը, և թե ինչպես պետք է Ռուսաստանը վերահսկեր թուրքական կողմի համապատասխան ձեռնարկումները: Մի բան էր հստակ ու որոշակի. պայմանագրի համաձայն ռուսական բանակը տեղակայվելու էր Արևմտյան Հայաստանի գրավյալ տարածքում, որը դառնալու էր ռուսական ազդեցության ոլորտ, իսկ հայ բնակչությունը մնալու էր նրա հովանավորության ներքո:

Ապա մյուս խումբը ներկայացնում է, թե ինչու 16-րդ հողվածը չիրագործվեց, ինչու և ինչ ձգտումների և շահերի բախման արդյունքում Սան-Ստեֆանոյի պայմանագրի նախնական տեքստը շահագրգիռ կողմերը՝ մասնավորապես Մեծ Բրիտանիան և Ավստրո-Հունգարիան ջանք չինայեցին այն վերանայելու: Հիմնական շեշտը նախ և առաջ դրվում է Բեռլինի վեհաժողովի նախօրեին կայացված երկու գաղտնի համաձայնագրերի վրա՝ անգլո-ռուսական և անգլո-թուրքական, որը հետագայում դիվանագիտության պատմության մեջ մտավ նաև «Կիպրոսի կոնվենցիա» անունով:

Խմբի անդամ աշակերտներից առաջինը հակիրճ ներկայացնում է նախ անգլո-ռուսական համաձայնագրի բովանդակությունը. իրենից ներկայացնում է 1878թ. կնքված գաղտնի համաձայնագիր Ռուսաստանի և Մեծ Բրիտանիայի միջև, որը ենթադրում էր Սան-Ստեֆանոյի պայմանագրի վերանայում: Ստորագրել են Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարար Սոլսբերին և Լոնդոնում Ռուսաստանի դեսպան Շուվալովը մայիսի 30-ին: Սան Ստեֆանոյից հետո, հայտնվելով ավստրո-անգլիական գործեր կոալիցիայի դեմ հանդիման, Ռուսաստանը ստիպված էր զիջումներ անել և Մեծ Բրիտանիայի հետ կնքել համաձայնագիր, որով ռուսական կառավարությունը հրաժարվում էր միացյալ Բուլղարիա ստեղծելու իր մտադրությունից, իսկ Արևմտյան Հայաստանում գրաված

որոշ տարածքներ վերադարձվում էին Թուրքիային: Բացի այդ, ռուսական կողմը Մեծ Բրիտանիային հավաստիացնում էր, որ ապագայում «Ռուսաստանի սահմանը չի ընդարձակվի Ասիական Թուրքիայի կողմից»: Համաձայնագրի 7-րդ հոդվածով Արևմտյան Հայաստանի բարենորոգումների իրականացման վերաբերյալ Սան–Ստեֆանոյի նախնական պայմանագրում եղած սուլթան, կառավարության «... խոստումները պետք է տրվեն ոչ թե բացառապես Ռուսաստանին, այլ նաև Անգլիային»: Այդպիսով, Ռուսաստանը փաստորեն զրկվում էր արևմտահայերի դրության բարելավման հարցերում իր գերակա դերից: Անգլո-ռուսական համաձայնագիրը շատ բանով կանխորոշեց հայկական հարցի վերաբերյալ 1878 թվականի Բեռլինի կոնգրեսի որոշումները:

Խմբի աշակերտներից մյուսը նույն կերպ հակիրճ ներկայացնում է «Կիպրոսի կոնվենցիայի» բովանդակությունը: Ներկայացվում է, որ այն անգլո-թուրքական պաշտպանական դաշինք էր ընդդեմ Ռուսաստանի, ստորագրվել է 1878թ. հունիսի 4-ին, Կ. Պոլսում: Կիպրոսի կոնվենցիայի 1-ին հոդվածով Անգլիան պարտավորվում էր զենքով պաշտպանել Թուրքիային այն դեպքում, եթե 1877-78թթ. ռուս-թուրքական պատերազմում գրավված Բաթումը, Արդահանը, Կարսը կամ դրանցից որևէ մեկը Ռուսաստանը պահեր իր ձեռքում և «երբևիցե փորձեր տիրել նորին կայսերական մեծության սուլթանի տարածքի որևէ այլ մասին Ասիայում»: Դրա փոխարեն սուլթանը պարտավորվում էր, Անգլիայի հետ համաձայնեցնելով, անհրաժեշտ բարենորոգումներ մտցնել նշված տարածքներում և, բացի այդ, որպեսզի «Անգլիան իր պարտականությունը կատարելու համար պահանջված միջոցներն ապահովի, ...սուլթանը հավանություն է տալիս նույնպես, որ Կիպրոս կղզին գրավվի և կառավարվի Անգլիայի կողմից»:

Խմբի անդամներից երրորդը այնուհետ ամփոփում է հիշյալ երկու համաձայնագրերի արդյունքները՝ մասնավորապես նշելով, որ 1878թ. Բեռլինի կոնգրեսի նախօրեին այդպիսի համաձայնագրերի կնքումը նպատակ ուներ, մի կողմից, ապահովել Անգլիայի աջակցությունը Թուրքիային 1878 թ. Սան–Ստեֆանոյի պայմանագրի ռուս-թուրքական սահմանների վերաբերյալ հոդվածների վերանայման ժամանակ, մյուս կողմից, ուժեղացնել Անգլիայի ազդեցությունը Թուրքիայում և Մերձավոր

Արևելքում ընդհանրապես: Անգլիական դիվանագիտությունը, հավատարիմ իր ավանդական քաղաքականությանը, արգելակում էր հաղթանակած Ռուսաստանի հետագա առաջխաղացումը ասիական Թուրքիայում, որը սպառնում էր բրիտանական կայսրության շահերին այդ տարածքում և, միևնույն ժամանակ, Թուրքիայից գաղտնի որոշ զիջումներ անելով Ռուսաստանին արևելյան Անատոլիայում, զավթում էր Կիպրոս կղզին՝ էլ ավելի ամրապնդելով իր դիրքերը արևելյան Միջերկրականով դեպի Հնդկաստան տանող ջրուղիներում, հող նախապատրաստելով նաև Եգիպտոսի ապագա գրավման համար (որն իրականացրեց 1882-ին): Ինչ վերաբերում է հայկական բարենորոգումներին, որոնք նախատեսված էին Սան–Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածով, ապա, ստանձնելով դրանց անցկացումը Թուրքիայի հետ երկուստեք համաձայնությամբ, Անգլիան Կիպրոսի կոնվենցիայով փաստորեն Ռուսաստանին զրկում էր բարենորոգումներին հսկելու իրական հնարավորությունից (քանի որ դրանք, ըստ Սան–Ստեֆանոյի պայմանագրի, պետք է կենսագործվեին մինչև ռուսական զորքերի դուրսբերումը Արևմտյան Հայաստանից) և այն փոխարինում Թուրքիայի «քրիստոնեաբնակ վայրերում բարենորոգումներ մտցնելու» անորոշ ձևակերպմամբ:

Այնուհետ խմբի կողմից առաջարկվում է ամբողջ դասարանին ստեղծագործական դերախաղի միջոցով ներկայացնել այն շահերը, որոնք ընկած էին տերությունների գաղտնի քաղաքական խաղերի հիմքում: Դասարանի մի հատվածը ներկայացնում է ռուսական, երկրորդը՝ բրիտանական, երրորդը՝ թուրքական շահերը: Այս կերպ ներկայացվում է ինչպես ստացած տեղեկությունը, այնպես էլ միջառարկայական կապերի (համաշխարհային պատմություն, աշխարհագրություն) և սեփական պատկերացումների միջոցով կատարված եզրահանգումները: Ուշադրություն է դարձվում ներայացման հուզական գործոնին, երբ օրինակ Բրիտանիայի վարչապետ Բենջամին Դիզրայելին, իմանալով Սան–Ստեֆանոյի պայմանագրի բովանդակության մասին և գիտացելով օսմանյան տիրույթների վրա ռուսական ազդեցության մեծացման վտանգը, ինչպես է կարգադրում Սոլսբերիին վերջնագիր ներկայացնել Լոնդոնում ռուսական դեսպան կոմս Շուվալովին՝ չհամաձայնելու դեպքում

սպառնալով նոր պատերազմով: Կամ ինչպես է ռուսական արքունիքը արձագանքում բրիտանական պահանջին՝ հասկանալով, որ այս կերպ կորցնում է ռուս-թուրքական պատերազմի կովկասյան ռազմաճակատի իր նվաճումներից, Օսմանյան պետության վրա ձեռք բերված իր ազդեցության լծակներից: Նույն հուզականությամբ ստեղծագործական դերախաղի տեսքով ներկայացվում է նաև Սուլթան Աբդուլ Համիդի հոգեվիճակը, երբ Բրիտանիան, հասկանալով Օսմանյան պետության անելանելի դրությունը, առաջարկում է ընդդեմ Ռուսաստանի գործարք՝ ռազմավարական կարևորություն ունեցող Կիպրոս Կղզին ռազմակալելու դիմաց, և թե ինչպես է, առանց մի փամփուշտ կրակելու, օգտվելով իրավիճակից շահող դուրս գալիս Մեծ Բրիտանիան:

Հաջորդ խումբը նկարագրում է, թե ինչ բացահայտ ու թաքնված վտանգներ էր պարունակում իր մեջ Հայկական հարցը տերությունների քաղաքական սակարկության առարկա դարձնելու հանգամանքը: Այստեղ նախ խմբի անդամներից մեկը ներկայացնում է ազգային-հոգևոր գործիչ Մկրտիչ Խրիմյանի պատվիրակության առաքելությունը Եվրոպայում և Ռուսաստանում Բեռլինի վեհաժողովի նախօրեին, կրկին հիեշցնում այդ օրերին Կ.Պոլսի պատրիարք Վարժապետյանի խոսքը՝ «Անգլիան որ ուզե՝ Հայաստանը փրկված է: Մեր քաղաքականությունը է Ռուսիո երախտագետ ըլլալով՝ հուսալ Անգղիա և Անգղիո շնորհիվ ապահովել մեր բարոյական և նյութական բարեկեցությունը», ապա ներկայացնում այն ողջ ճանապարհին ու ջանքերը, որոնք հաղթահարեցին Խրիմյանն ու պատվիրակության անդամները Բեռլինի վեհաժողովի նախօրեին: Հակիրճ ներկայացվում է Խորեն Նարբեյի այցը Պետերբուրգ ունեցած հանդիպումներն ու արձանագրված արդյունքները: Ապա նույն կերպ՝ Խրիմյանի ճանապարհորդությունը նախ Իտալիա, ապա՝ Ֆրանսիա և Բրիտանիա, Հռոմում, Փարիզում և Լոնդոնում կայացած ուշագրավ հանդիպումները, հատկապես Լոնդոնում լսած թափանցիկ ակնարկները բրիտանական նավերի Տավրոսի լեռները բարձրանալու անկարողության մասին, ապա վերջին հույսի սպասումով Բեռլինում անցկացրած օրերն ու այն մեծ հուսալքությունը, որը ապրեց մեծ հայրենասերը վեհաժողովին մասնակից տերությունների վարքագծից:

Խմբի անդամներից մյուսը Խրիմյանի առաքելության ձախողման օրինակով ներկայացնում է քաղաքականության մեջ հույզերի, զգացմունքների և բարոյականության ստորադասությունը քաղաքական շահերի և հետաքրքրությունների առաջ՝ ներկայացնելով, որ հայկական պատվիրակությունը մտել էր մի խաղի մեջ, որի կանոնների մասին իրական պատկերացում չունեի: Որպես ապացույց բերում է հայտնի օրինակը, որ երբ հայկական պատվիրակությունը Խրիմյան Հայրիկի ղեկավարությամբ պատրաստվում էր Բեռլինի վեհաժողովին մասնակցելու նպատակով մեկնել Եվրոպա, շրջապատի մոտիկ մարդիկ նրան հարցնում են.

-Միրելի՛ Հայրիկ, դու եվրոպական լեզուներ չգիտես, ինչպե՞ս ես արտահայտվելու, Հայկական հարցը եվրոպական տերությունների ղեկավարների առջև ինչպե՞ս ես բարձրացնելու: -Ճիշտ է, ես չգիտեմ նրանց լեզուն, բայց գիտեմ մի լեզու, որ ընդհանուր է և հասկանալի բոլոր ազգերի համար, դա լացն է:

Իհարկե, պատկերացում չունենալով տերությունների քաղաքական շահերի հակադրությունների մասին, Խրիմյանը միամտաբար կարծում էր, որ երբ իրեն թույլ տան բարձրանա ամբիոն ու խոսելու փոխարեն հոնգուր — հոնգուր լացի, եվրոպական պատվիրակները կզգան իմ ազգի ողբալի վիճակը, նրանց մոտ կարթնանա խղճի զգացողություն և սեփական շահերն ու ձգտումները կստորադասեն տառապյալ հայերին փրկելու գաղափարի առաջ:

Իհարկե, Խրիմյան Հայրիկին և նրա պատվիրակությանը ոչ միայն ձայն չտվին վեհաժողովում, այլև ներս չթողեցին: Հայկական հարցը չլուծվեց, և մեր պատվիրակությունը հուսախաբված վերադարձավ: Դեռ Լոնդոնում եղած օրերին, երբ Խրիմյանը հանդիպումներ ունեցավ արտգործմինիստր Սոլսբերիի, ինչպես նաև բրիտանական պառլամենտականների հետ, պետք է հասկանար, որ վեհաժողովից ակնկալիքներ ունենալը անմտություն է, հատկապես երբ Բրիտանիայի պառլամենտի լիբերալ կուսակցության հեղինակավոր անդամներից Ֆորստերը հանդիպման ժամանակ ուղիղ տեքստով Խրիմյանին ասում էր. «Մի վշտացնեք Ռուսաստանին, որը ձեր դրացին է, մի դառնաք այստեղ

գործիք ոչ պահպանողական կուսակցության և ոչ էլ մեր՝ լիբերալների ձեռքը: Շատ դժվար է Անգլիայի համար հսկել Հայաստանի վրա, որ այդքան հեռու է մեզանից... Անգլիայի օգնության վրա հույս չի կարելի դնել»: Իսկ Բեռլինի վեհաժողովը հրավիրվել էր նախ և առաջ Բրիտանիայի և Ավստրո-հունգարիայի պահանջով, ովքեր թուրքական շահերի իրացմամբ ռուսական ազդեցության չեզոքացման խնդիրը առաջնահերթ էին համարում:

Ինչևէ, չստանալով իրական երաշխիքներ՝ հայ ազգային պատվիրակությունը, այնուամենայնիվ մեկնեց Բեռլին, սակայն նրան չթույլատրվեց նույնիսկ մասնակցել կոնգրեսի նիստերին: Բեռլինի կոնգրեսում, Սան-Ստեֆանոյի պայմանագրի վերանայման հետևանքով, արևմտա-եվրոպական դիվանագիտությանը հաջողվեց Ռուսաստանին զրկել հայկական գործերը տնօրինելու մենաշնորհից: Սան-Ստեֆանոյի և Բեռլինի պայմանագրերի համապատասխանաբար 16-րդ և 61-րդ հոդվածներով սկզբնավորվեց Հայկական հարցի դիվանագիտական պատմությունը, ինչպես նաև հասարակա-քաղաքական կյանքում եվրոպական դիվանագիտության օգնությամբ թուրքական լուծը թոթափելու, հայերի անկախությունն ու ինքնավարությունը ձեռք բերելու մտայնությունն ու գործելակերպը, որը շարունակվեց մինչև Առաջին համաշխարհային պատերազմն և մեզ՝ հայերիս համար ունեցավ ողբերգական հանգուցալուծում:

Խմբի անդամներից երկրորդը նախ ներկայացնում է Բեռլինի վեհաժողովում փոփոխված հայկական բարենորոգումներին վերաբերող 61-րդ հոդվածը, ապա համեմատում Սան-Ստեֆանոյի 16 և Բեռլինի պայմանագրի 61-րդ Հայաստանին և հայերին վերաբերող հոդվածների բովանդակային տարբերությունը:

Բայց մինչ 16-րդ և 61-րդ հոդվածների համեմատությանն անդրադառնալը նախ հակիրճ ներկայացվում է, թե ինչ ակնկալիքներ ունեին հայ հոգևոր-հասարակական շրջանակները Ռուսաստանից, ապա և եվրոպական տերություններից հայկական հարցի առնչությամբ: Մասնավորապես, թե ինչպես էր նախքան Սան-Ստեֆանոյի պայմանագրի կնքումը՝ 1878 թվականի հունվարին Կ. Պոլսի պատրիարք Ներսես

Վարժապետյանը ազգային ժողովին ներկայացրել մի տեղեկագիր, որտեղ շարադրված էր Հայաստանի ինքնավարության ծրագիրը՝ Լիբանանի օրինակով (1864-ի կանոնադրությամբ Լիբանանը կառավարում էր քրիստոնյա ընդհանուր նահանգապետը): Ծրագիրը, որ ամենայն հավանականությամբ թելադրված էր թուրքական կառավարության և Անգլիայի կողմից, մերժվեց: Կ. Պոլսի և Անդրկովկասի հայ քաղաքական շրջանների (որոնք արևմտահայության ազատագրության հարցը կապում էին Ռուսաստանի հետ) ճնշման տակ Կ. Պոլսի պատրիարքն իր ներկայացուցչի՝ Ադրիանուպոլսի առաջնորդական փոխանորդ Գևորգ վարդապետ Ռուսչուզյանի միջոցով (որին միացան Ստեփան Ասլանյանը և Հովհաննես Նուրյանը), իսկ ավելի ուշ նաև անձամբ շփման մեջ մտավ ռուսական հրամանատարության (Մեծ իշխան Նիկոլայ Նիկոլանիչ) և դիվանագիտական ներկայացուցիչների (Իգնատև, Նելիդով) հետ ու խնդրագիր հղեց Ալեքսանդր II կայսրին: Նույն ժամանակ, Գրիգոր Արծրունու նախաձեռնությամբ, խնդրագիր ներկայացվեց Կովկասի փոխարքային: Ռուսական կառավարությունը համաձայնեց հայերի վերաբերյալ հատուկ կետեր մտցնել ռուս-թուրքական պայմանագրում, ինչը սակայն չգոհացրեց հայերին, քանի որ այնտեղ խոսք անգամ չկար նրանց ակնկալված ինքնավարության մասին: Հոդվածի այդպիսի չափավորությունը բացատրվում էր Ռուսաստանի վրա Անգլիայի դիվանագիտական ճնշումով, որը վտանգված էր տեսնում իր շահերն Ասիայում, ինչպես նաև Հնդկաստան տանող ճանապարհներին:

Բայց այնուամենայնիվ, պայմանագրի 16-րդ հոդվածում ասվում էր. «Նկատի առնելով այն, որ ռուսական զորքերի դուրսբերումը նրանց կողմից գրավված Հայաստանի՝ Թուրքիային վերադարձվելիք վայրերից, կարող է այնտեղ առիթ տալ բախումների և բարդությունների, որոնք երկու պետությունների բարի հարաբերությունների վրա կունենան վնասակար ազդեցություն, Բարձր Դուռը պարտավորվում է անհապաղ կենսագործել հայկական մարզերի տեղական կարիքներից հարուցվող բարելավումներ և բարենորոգություններ, և զերծ պահել հայերի անվտանգությունը քրդերից և չերքեզներից»: Պայմանագրի 19-րդ հոդվածով Ռուսաստանին էին անցնում Կարսը, Արդահանը, Բայազետը, Բաթումը, Օլթին, Արտանուջը, Արդվինը, Ալաշկերտը, Կաղզվանը և Խումարը: Այսինքն, 16-րդ հոդվածի դրական առանցքն այն էր, որ Օսմանյան կառավարությունը՝ ի դեմս պայմանագիրը

կնքող մեծ վեզիր Սաֆեթ փաշայի, ընդունում էր սեփական կայսրությունում տարածքների գոյություն, որի նկատմամբ պատմական իրավունքը պատկանում է հայ ժողովրդին:

Բեռլինի վեհաժողովում, որը տեղի է ունեցավ 1878թ.-ի հունիսի 13-ից հուլիսի 13-ը, հայերին վերաբերող հողվածը ենթարկվեց արմատական բովանդակային փոփոխության: Նոր՝ 61-րդ հողվածը, այլևս չէր արձանագրում Օսմանյան կայսրությունում հայկական տարածքների գոյության փաստը, այլ ուղղակի նշվում էր, որ Թուրքական կառավարությունը պարտավորվում է բարեփոխումներ անցկացնել կայսրության հայաբնակ տարածքներում, ապահովել հայերի անվտանգությունը: Մյուս կողմից էլ հայերի դրության բարելավման հարցը վերցվում էր Ռուսաստանից և տրվում էվրոպական 6 տերություններին(Անգլիա, Ֆրանսիա, Գերմանիա, Ռուսաստան, Ավստրո-Հունգարիա, Իտալիա): Դրանով Արևմտյան Հայաստանի հարցը մտնում էր խոշոր պետությունների հակասությունների ոլորտ:

Այնուհետ կրկին հարց է ուղղվում ողջ դասարանին, թե ինչու Բեռլինի վեհաժողովը շրջադարձային եղավ Հայկական հարցի պատմության մեջ, ինչպես ժամանակի ընթացքում բյուրեղացրեց հայերից ցանկացած գնով ազատվելու մոլուցքը, ինչպես էվրոպական դիվանագետությունից հուսախաբ հայ հասարակական-քաղաքական շրջանները որդեգրեցին Արևմտյան Հայաստանը թուրքական լծից զինված պայքարով ազատագրելու գաղափարը:

Խնդրի հետագա արձարժման համար առաջարկվում է կիրառել «մտքերի տարափը կամ մտազրոհի մեթոդը», որտեղ հիմնական շեշտադրումն արվում է մտքերի քանակի, դրանց բազմազանության և այն հանգամանքի վրա, որ յուրաքանչյուր միտք արժանի է ուշադրության:

Այնուհետև հարցադրումը մի փոքր ավելի է որոշակիացվում, թե ինչ ակնարկ և կանաչ լույս տեսավ սուլթան Աբդուլ Համիդը 61-րդ հողվածի տողերում, որը և հետագայում ջանասիրաբար փորձում էր կյանքի կոչել:

Խոսքը նախ և առաջ վերաբերում է 61-րդ հոդվածի «հայաբնակ տարածքներ» ձևակերպմանը, որն իր մեջ պարունակում էր քողարկված վտանգներ: Այսինքն, պարտավորությունները, որոնք ստանձնել է Սուլթանը Բեռլինի դաշնագրով, այնքան ժամանակ կլինի եվրոպական պետությունների ձեռքին օսմանյան գործերին միջամտելու քաղաքական գործիք, քանի դեռ հայերն ապրում և մեծամասնություն են կազմում պատմական հայկական տարածքներում: Եթե մի օր հայեր այլևս չլինեն այդ տարածքներում, չի լինի նաև «բարենորոգումներ» անունը կրող եվրոպական գործիքը:

Այս հիմնախնդիրը մտազրոհի մեթոդով հակիրճ քննարկելուց հետո հաջորդ խումբը ներկայացնում է այն գործողությունները, որոնք սուլթանը սկսած 1880-ական թթ. ձեռնարկեց «հայերից ձերբագատվելու» խնդիրը լուծելու համար:

Խմբի անդամներից մեկը հակիրճ ներկայացնում է այս համատեքստում սուլթանի նախաձեռնած վարչատարածքային բաժանումները, որոնց նպատակն էր հայկական տարածքները վերաբաժանել այնպես, որ հայերը ոչ մի վիլայեթում մեծամասնություն չկազմեն: Հետագայում օսմանյան պետության համար սա կլինեք բարենորոգումները չկատարելու արդարացումներից մեկը, քանի որ դրանց բացակայությունն ուղղակի կպատճառաբանվեր մեծամասնության կողմից փոքրամասնության շահերն արտացոլող բարեփոխումների անընդունելիությամբ: Ապա հիշեցվում է, որ այս գործընթացը սկսելուց առաջ սուլթանը կարգադրել էր 1880թ.Օսմանյան կայսրության քարտեզից ջնջել Հայաստան անունը՝ վերանվանելով տարածքը Արևելյան Անատոլիա:

Խմբի անդամներից մյուսը ներկայացնում է ազգայնական ու կրոնական ծայրահեղ գաղափարախոսությունների վերելքը, թե ինչպես տարածում գտնող պանիսլամիզմի և պանթուրքիզմի ազդեցության տակ օսմանյան իրականության տարբեր շերտեր սկսել էին բացահայտ խոսել հայերից մեկընդմիջտ ազատվելու անհրաժեշտության մասին: Ներկայացվում է, թե ինչպես էր Բալկաններում տիրույթներից զրկվելուց հետո, Արդուլ Համիդը նաև Գերմանիայի կայզեր Վիլհելմ երկրորդի բարեկամական հորդորով հայացքը «սևեռել դեպի արևելք» և այսուհետ

թուրքական պետության կենսունակության ավիշը փորձում էր գտնել Արևելքում՝ արյունակից ժողովուրդներին մեկ պետության մեջ միավորելու ճանապարհով:

Խմբի անդամներից երրորդը ներկայացնում է այն արհեստական խոչընդոտներն ու դժվարությունները, որոնք կոչված էին խտրական վերաբերմունքը դարձնելու անտանելի, որը կստիպեր հայերին նաև ինքնակամ լքել սեփական բնակավայրերը: Հիմնական շեշտադրումը կատարվում էր Բալկաններից և Կովկասից Օսմանյան տիրույթներ բերված չերքեզներին և լազերին մի կողմից, քրդական ցեղապետերի միջոցով ձևավորած «Համիդե» գնդերին մյուս կողմից, որոնց թույլատրված էր կամայական ցանկացած գործողություն, որը կվերաբերեր հայկական բնակավայրերը կողոպտելուն, ունեցվածքը խլելուն, նրանց մեջ սարսափ, տագնապ և անպաշտպանության զգացողություն առաջացնելուն:

Այստեղ խմբի մեկ այլ անդամ ներկայացնում է 1894–96թթ. հայերի զանգվածային ջարդերը որպես Բեռլինի դաշնագրի 61–րդ հոդվածի ուղիղ արդյունք և այն, որ տերությունների հակադիր շահերը թույլ էին տալիս սուլթանին ավելի ու ավելի սանձարձակ լինելու «հայերից ձերբագատվելու» խնդրի իրագործման ժամանակ: Այս համատեքստում հիշեցվում է Քյամիլ փաշայի հայտնի արտահայտությունը, թե իբր Բալկաններում Բուլղարիային զիջումներ անելով, օձ սնուցեցին, չեն պատրաստվում նույնը կրկնել Արևելքում՝ հայերի հետ կապված: Ներկայացվում է, թե ինչպես «օրը ցերեկով» իրականացված հայերի զանգվածային ցեղասպանությունն ավարտին հասցնել մինչև վերջ չհաջողվեց և անպաշտպան հայության զանգվածային կոտորածը ստիպեց եվրոպական դեսպաններին «Մայիսյան բարենորոգումների» ծրագրով առ ժամանակ հետաձգելու Օսմանյան պետության վայրագությունները: Ինչու՞ հետաձգելու, որովհետև Օսմանյան պետությունը ոչ միայն պատասխանատվության չենթարկվեց, այլև հետևություններ կատարեց «անավարտ թողած» փորձից և հանգեց այն հետևությանը, որ «հայկական հարցը» վերջնականապես լուծելու համար անհրաժեշտ են այնպիսի միջազգային պայմաններ, երբ պետությունները ժամանակ և հնարավորություն չունենային միջամտելու օսմանյան ներքին գործերին և բռնելու արյունարբու դահիճների ձեռքը: Այդպիսի հարմար առիթ ընձեռեց Առաջին աշխարհամարտը:

Եվ վերջում ամբողջ դասարանին առաջարկվում է Բլումի ուսուցման տաքսոնոմայի կիրառմամբ ամբողջացնել և ամփոփել մատուցված նյութը: